41. ՆԱՄԱՐԴ ԱԽՊԵՐՆԵՐ

Կէլնի կէլնի մեյ խապ կնիկ ինան իրեքյ խապ լաճ:

Էսա իրեքյ լաճ մեկ օր կնստին ուրենց ահվալի վերեն կմտածեն: Անքյապ կէլնեն:

Էսա իրեքյ տղեյներ կորոշին որ էրթան կարրութեն, փարա վասրկին, պիրին ուրենց տուն-տեղաց մեչ, պսայվեն, տան-տեղաց տեր էլնեն:

Կասին, իրենց մեչ խաբար կուտան, որ էն մեկել օր ինեն ճամբախ: Իրեքյն էլ խոսք կանին մեկ, էն մեկել օր կինեն ճամբախ:

Շատ կէրթան, քիչ կէրթան կխասնեն մեյ խապ դաշտի մեչ, կտիսնան որ ճամբախ կէլնի իրեքյ ճոդ: Ի՛նչխ անեն, ի՛նչխ չանեն, կկայնեն էտա տեղ կմտածեն, թե ո՛ր ճամխիս էրթանքյ:

Պստիկ ախպերն ի, կասի. - Էկեքյ, մեկ պանդմ ինգյավ իմ միտկ:

Ախպերներ կասեն. - Ի՞նչ ի, տե՛ ասա:

Էսա պստիկ ախպերն ի, կասի. - Էսօր ճիճ զատկի օրն ի, մենքյ էլ էսօր ենքյ էլե տյուս, էկեքյ ուխտ անենքյ էսա քյարն էլ դնենքյ էսա ճամխի պռուկ՝ նշան: Էրթանքյ, մե մեյս մեկ ճամբախ պոնինք էրթանքյ: Մենքյ մեր կսմաթ՝ ինչ որ փատա վասրկանքյ, ճիշտ էսա զատկի օր գյանքյ ստեղ մեմեկելու կնտրենենքյ, մեյտրա էրթանքյ տուն: Էն կավլով որն որ շոտ գյա, էն տեղ աչկի՝ չուր էն մեկելներ գյան:

Էսա ախպերներ՝ շատ աղեկ, կասեն, կպիրին մեյ խապ քյար վերեն նշան կանեն, կդնեն ճամխի պռուկ, մեկ մեկելու կպաքյեն, կկանչեն ուրենց աստված, մեյ մեկ ճամբախ կպոնեն, կէրթան:

Շատ կէրթան, քիչ կէրթան, մե մեկ ուր տեղ կխասնեն:

Շատ կընցնի, իսոնցա օրը կուգյա, ուրենց ուխտի օրն ի՝ ճիճ զատկվան մեյ շապաթ ի մնայե, կէլնեն ուրենց թար թախըմ կժողվեն՝ կինեն ճամբախ, կուգյան: Կուգյան կխասնեն ուրենց նշան արած տեղ, կտիսնան, որ մարթ ծեռ չի տվե ուրենց նշանին:

Առաճ էրկու ճոճ ախպերներ կուգյան, կտիսնան որ պստիկ ախպեր

ալա չի իկե: Կնստեն ուրենց մեյ փարվա քյար-վաստակի վերեն խաբար կուտան: Մեյ մեկելու կպսպվեն, կտիսնան որ նա էն ի վաստակ արե, նա՝ էն: Էտասկնա մալըլ, մռութ կախած կնստեն կմտածեն թե՝ ըսկնա առանց փարի ի՞նչխ էրթան տուն:

Կնստեն կաչկեն, չհւր պստիկ ախպեր գյա: Կտիսնան որ էն դեխից ախպեր կուգյա:

Պստիկ ախպեր կուգյա կտիսնա որ ուր ախպերներ մալըլ, գյլխներ առեր ին ուրենց էրկու ծեռաց մեչ, նստեր ին, կմտածեն:

Կուգյա կմոտոխասնա ախպերներաց մոտ, կասի. - Ի՞նչ էլի ծե, էտասկնա մալըլ եքյ:

Ախպերներն ի, կասեն. - Քյեզնից պախինքյ, ասըծուց ի՞նչխ պախենքյ: Մենքյ էսքան օր կնայինքյ չուր մկա գատըմ չենք վաստկե. ինչխ կնայինքյ, ըսկուն էլմ'էլ դառդակ ջեռքով էկանքյ: Կմտածենքյ, թե ըսկնա դառդակ ջեռքով ի՞նչխ էրթանքյ տուն:

Պստիկ ախպերն ի, կասի. - Մառախ մեքյ անե: Ես իրեքյ խարիր ոսկի վաստկեր եմ, ըմեն մեկիս խարրական ոսկի կխասնի: Կպաժնենքյ վերյիտերս, կէրթանքյ տուն:

Պստիկ լաճն ի, կխանի խարիր խատ ճհճ ախպոր կուտա, խարիր խատ էլ օրթանջի ախպոր, խարիրն էլ կպախի ուր: Կասի՝ դե ելեքյ էրթանքյ:

Ճհճ ախպերներն ի, ուրենց մեչ կմտածեն կասեն. «Ի՞նչխ էլե, մեկ օր չէ, մեկ օր էսա պան էրևան կէլնի մե մեր մոր առաճ, ուրիշներաց առաճ կխայտառակի»:

Ճհճ ախպեր օրթանջի ախպոր կասի. - Արե իսրան սպանենքյ, թալենքյ դաշտ, թողնենքյ էրթանքյ:

Օրթանջա ախպեր կասի. - Չէ՛, խեղճ ի, պիրենքյ էրկու ոտ կտրենքյ, թա̈լենք էնա փոս, թողնենքյ էրթա̈նքյ:

Վարիսալ խոսկներ կանեն մեկ, ՚կպռնեն ուրենց պստիկ ախպոր էրկու ոտկեր կկտրեն, կթա̈լեն էն դեխ՝ փոսի մեչ: Կդա̈ռնան էն խարիր ոսկին էլ կպա̈ժնեն ուրենց մեչ, կէլնի խարիր իսունական ոսկի, կէլնեն կինեն ճամբախ, կէրթան տուն:

Կդա̈ռնան կասեն՝ թե որ մեր մեր խառցուց ասաց թե, ծեր պստիկ ախպեր չե՞քյ տիսե, ասենքյ՝ չէ, շատ աչկեցինքյ՝ չէկավ, մենքյ էլ թողինքյ էկանքյ: Կասեն՝ կէրթան տուն:

Կէրթա̈ն, որ կխասնեն տուն, մեր շատ կուրախնա, կասի. - Ապա ծեր պստիկ ախպերն ու՞ր է:

Իսոնքյն էլ կասեն. - Մեր նշան դրած տեղ շատ աչկեցինք, տեսանք որ չէկավ, մենքյ էլ թողինքյ, էկանքյ:

Մեր կմիյա̈մտվի ուրենց պերած փա̈րով կպսայվեն, կէլնեն տան-տեղաց տեր:

Պստիկ տղեն էնտեղ խորի մեչ գյեռ մնացե դա̈: Էսա տղեն ոտկեր կտրած, գյեռ ինգյե էտա խորի մեչ, կուլա̈ կմռմռա: Բիրդա̈ն էն դեխից

քյարվայիտերաց ծեն կառի, խորից կբոռա, կճըվա՝ ի սեր աստծու, զիկ էսա տեղից ազատեք: Մարթ չի լսի, վո՞վ կլսի ինոր ծեն էն խորից:

Էսա պազրգյահտերն ի, կուգյան կթափեն էսա տեղ:

Քյրաջիքյտերաց մեկ կէրթա էն դեխ՝ ճուր թափելու: Քիրդան ծեմ կառնի, կուգյա կտիսնա որ ի՞նչ. մեյ խատ խորոտ տղեմ, գյեռ ջուխտ ոտկեր կտրեր ին, թալեր ին խորի մեչ: Վազեվազ կուգյա, ուր աղին կասի:

Աղեն կասի. - Կնա բե խենքյ ի՞նչ տղա յի:

Կէլնեն կէրթան, կխանեն պիրեն աղի մոտ: Աղեն որ կտիսնա ջուխտ ոտկեր կտրած ի, կասի. «Ջայինամ, ես տղա չունեմ, կտանեմ զիկ տղա, խո կանա իմ տյույինին մույյաթ կենա»: Կառնեն, կտանեն:

Կէրթան, կէրթան էսա պազրգյահտեր կխասնեն ուրենց տեղ:

Աղեն կառնի էտա չոլախ լաճ, կէրթա տուն, կնգյան կասի. - Էսա լաճ պիտի պախինքյ անենքյ մե լաճ, քյանի որ տղա չունենքյ:

Էսրա կնիյն ի, կպարկանա ուր մարթու վերեն, կասի. - Քյո տուն ավերի, էլ մարթ չկեր, էսա ջուխտ ոտնով անգյալ առիր էկար:

Մարթն ի, կասի. - Ի՞նչ անենքյ, կնիկ, խեղճ տղա յի, ոտկեր կտրած՝ դաշտի մեջ թալիր ին, ես էլ տեսա որ խորոտ տղա յի, ասի՝ տանեմ զիկ, քյանի որ ես էլ չունիմ, խո կանա տյույինին մույյաթ մնա, մուշթարիքյ ճամխու տնել, հաշիվներ պախել:

Կնիյն ի, կասի. - Տյու կիտես, ի՞նչխ կիտես՝ ըսկուն արա:

Էսա մարթն ի, կպերի էսա լաճուն նոր, թազա խալվներ կխագյուցի, կտանի կդնի ուր տյուքյան:

Կընցնի ըսկնա մեյ ժամանակ: Էսա մարթ կտիսնա, որ էսա տղեն շատ խորոտ տյուքյան կկառավարի, բիս-բիթուն ուր գյոռծեր թասլիմ կանե էսա լաճուն:

Կընցնի մե ժամանակ: Ավուր մեկ էսա պազրգյան կմեռնի: Ինչխ կէլնի, էսա տղեն կուզի ուր աղի կնիկ ուր խամար: Վարհասլ էսա լաճ ինան կնիկ կպսայվեն, կէլնեն իրիկ, կնիկ:

Էսա տղեն ըսկնա խանգյիսար ուր պանին, գյոռծին օր կընցուցի:

Ավուր մեկ երկու խատ ճամխորթ կուզյան էսա տղի տյուքյան: Ուրիշ երկրից ին իկե, ապրանքյ-պան կառնեն, որ երթան ուրենց երկիր:

Էսա ճամխորթներ որ կմտնին տյուքյան, բիրդան ինոնց աչկ կինի էսա տյույինի տիրոչ, մե-մեկելու խետ խաբար կուտան, կասեն «Էսա կնմանի մեր ախպեր»: Կճանչնան՝ աղորթ որ ուրենց ախպերն ի: Կիրիշկան կտիսնան, որ ոտկերն էլ չոլախ ի, ծեն չեն խանե, ուրենց առտուր կանեն:

Էսա պստիկ տղեն ի, էն էլ կճանչնա որ իսրանքյ ուր ախպերներն ին, կխառնուցի մենակ կասի. «Տյուքյ ո՞ր երկրից եքյ». էսականդար, էլ ծեն չի խանե:

Զուր իրիկուն որ կմթնի, էս ճամխորթ մարթեր կասեն. - Մե էսա կիշեր տեղ տու չուր առատուն: Առատուն էլնենքյ ինենքյ մեր ճամբախ էրթանքյ:

Էսա տղեն ի, կասի. - Ինչի՞ չէ:

Զրաղ կտնի խետ, կդառնա չրաղին կասի. - Տար տուն, խաց-պան տվեքյ, թող ուտեն, չուր իրիկուն ես կուգյամ:

Զրաղն ի, կառնի կերթա տուն, ինչ որ պետքն է՝ կնգյան կասի: Կնիյն էլ ուր մարթու պատիվ տեղ անելու խամար կասի. «Ալբաթ իսրանք ինոր պարեկսում ին»: Շատ պատիվ կանի, չուր իրիկուն ուր մարթ կուգյա տուն»:

Էսա ախպերներ որ կտիսնան ուրենց ախպոր տան թադարյուք, հարստութեն, շատ կզարմանան:

Իրիկուն գյեռ, էսա մարթ կուգյա տուն, նոր կասեն, կելնեն խաց-պան կուտեն: Կդառնա կնգյան կասի. - Իսոնց տեղ շինի, թող ելնեն պառկեն:

Իսոնք կերթան կպառկեն: Կնիկ կդառնա ուր մարթուն կխառցուցի, կասի. - Իսոնք վո՞վ ին, խո քյո պարեկամներ չի՞ն:

Մարթ կասի. - Չէ, ճամխորթ ին, ուրիշ երկրիս էկեր ին ստեղ, չուր վաղ կերթան: Տեղ չունեն, զիկ ասին. «Էսա մեկ կիշեր մե տեղ տուր՝ չուր առատուն, առատուն թողնենքյ երթանքյ մեր պանին»: Ես էլ ասեցի՝ ի՞նչ կելնի, էկեքյ: Խեղճ ին, կարիբ ին, որտե՞ղ էօրեռխկի:

Սորա կդառնա էսա լաճ կնգյան կասի. - Ես առատուն շոտ կելնեմ կերթամ տյուքյան, իսոնքյ ալա քյնուկ կելնեն: Եփ որ վեր կկենան, խորոտ իսոնց խաց-պան կիրիցուցես, սոր խինգյ-խինգյ ոսկի էլ կուտաս, կասես. առեքյ, ես էլ ծե ճամխու ծախս, ծեր երկիր ավատա զատն ի, կխրոջեքյ:

Կասի, կելնեն ինոնքյն էլ կերթան կքնեն:

Առատուն էսա մարթն ի, կելնի, շոտ կերթա ուր տյուքյան:

Առատուն էսա մարթեր կելնեն վեր, որ պիտի երթան: Կնիյն ի, կասի. - Կայնեքյ, խաց-պան կերեքյ, նոր կնացեքյ:

Սորա խաց-պան կպիրի, էսա մարթեր կուտեն կխմեն, կելնեն շնորհակալ, կելնեն կինեն ուրենց ճամբախ:

Էսա կնիկ կդառնա իսոնց, կխանի խինգյ-խինգյ ոսկի էլ կուտա, կասի. - Ես էլ առեքյ ծե ճամխու խարջլը:

Էսա մարթեր շատ շնորհակալ կելնեն, կառնեն էտա խինգյական ոսկին, կինեն ճամբախ:

Էսա կնիյն էլ իսնցան ճամխու կտնի չուր դուռ, քիչմ կերթան թե չէ՝ էսա կնիկ բիրդան միտ պան կինի, կասի ինքյ ուր. «Աջեբա էսա մարթերաց ես չխառցուցի թե՝ տյուքյ իմ մարթուն ի՞նչ եք, որ ծե ընկնա պատիվ տվեց»: Կասի, կդառնա իսոնց կբոռա, կասի. - Ախպերներ, կայնե՛քյ, ես ծե մեյ պամ խառցուցեմ, ամոթ չելնի, - կասի, - տյուքյ իմ մարթուն ի՞նչ իք:

Էսա մարթեր կդառնան էսա կնգյան ի՞նչ ասին՝ չեն կիտի: Մենակ էսականդար կասեն. «Մեր ինան քյո մարթու մեջ մենակ աստված կիտի»: Կասեն, կինեն ճամբախ:

Քիչըմ կզատանան, էսա կնիկ գյեռ մալիվլ կայնե իսոնց իտև կիրիշկա: Բիրդան կտիսնա՝ էսա մարթեր որ քիչըմ զատացեր են, գյետին կպատռնի, էսա էրկու մարթեր կմտնեն մեչ, գյնա գյետին կկոծվի:

Էսա կնիկ որ էսա պան կտիսնա, քյեռզվեր կառնի գյետին, կասի. «Իմ պերան կոտրեր, ես էսա խարար չասի, էսա ի՛նչ պան էր արի, ինչ սև էր տվի վեր իմ գյլխուն, էսա մարթերաց մեղքյի տակ մտա»:

Կուգյա էտասկնա մալիվլ-տրտում ծեռ կկցի, կնստի չուր իրիկուն մարթ կուգյա տուն:

Իրիկուն որ մարթ կուգյա տուն, կտիսնա որ կնիկ տրտում-մալիվլ նստե կմտածի: Կնգյան կասի. - Ի՞նչ է էլե քյե, որ էտասկնա մալիվլ ես:

Կնիյ ջուլաբ չի տա:

Մարթ էլմ'էլ կխառնուցի՝ կասի. - Ախր քյե ի՞նչ էլե յի, չէլնի էն մարթեր մե պան ին ասե քյե, կամ մի պան ին գյոռնցե: Ասա, ես էլ միամտվեմ:

Կնիյն ի, կասի. - Ի՞նչ ասեմ, պան ասելուց էլեր ի:

Մարթ կասի. - Ախր ի՞նչ ի, ասա:

Կնիյ կասի. - Ի՞նչխ ասեմ, էսոր որ էտա մարթեր մեր տուն ին, առատուն քյո ասածի պես էլա խաց-պան տվի, կերան: Դառնա խինգյական ոսկի էլ տվի ինոնց՝ ճամխու ծախս: Որ ճամխու տրի, կանչեցի, ասի. «Ախպերներ, ամոթ չէլնի՞ խառնուցել, տյուք իմ մարթուն ի՞նչ եք, որ ծե ըսկնա պատիվ տվեց, պան արաց»: Ինոնքն էլ ասին. «Մի խառնուցե, մեր ինան քյո մարթու մեչ մենակ աստված կիտի»: Էսա ասին, ուրենց ասել կիցան, բիրդան գյետին պացվավ, էսա մարթեր կնացին մեչ, գյետին էլմ'էլ կոծվավ: Էն գյախվե չիւր մկա՝ էլ չեմ կիտե դեոր իմ, ինոնց մեղքի տակ մտա, պերանս կոտրեր՝ էտա խաբար չասի:

Մարթն ի, որ կլսի, կնգյան կասի. - Իսկի էլ մի մտածե, էտա որ կա՝ աստծու դատաստան էր:

Կդառնա կպատմի ուր կնգյան ուր գյլխու էկածներ, թե ինչխ ուր ոտկեր կտրեցին, թալեցին մեյ փոսի մեչ, նոր ուր առաճվան մարթ կընտավ, իպե ուր մոտ: Իսոնք որ կին՝ ուր ախպերներն ին: Ֆազա զատ մկա ես քյե չի ասե: Էս ի՛նչ որ էլավ՝ աստծու դատաստան էլ էլավ: